ձեււում. ոտքերի ծայրերը՝ անդեկ նաւակների նման՝ մէկը միւսին են բախում եւ չնչին քարերի առջեւ ուժասպառ կանգ առնում:

Ուֆ...տները պարում են, Նորքը ալիքի նման բարձրանում է, մարդկային մարմնի ոսկորների թիւը կորել է, մանրէների սեւ վոհմակները դրոհ են տալիս ստամոքսի դէմ, աչքերի մէջ դիշեր է նստում:

Լեզուաբանական պրոֆեսորը, որ Պարսկաստանից բերած համեմներով բաստրմա է շինել եւ փողոցի պատշգամից կախ արել, ախորժակը միանգամից կորցրել է: Սիրտը կուրծքի տակ երերում է թելից կախուած կտոր մսի նման: Աչքերը մորթուել են: Օմար-Խայամի քառեակը ծով է դարձել ու Խորենացու եւ Եղնիկի բառերը մէջը սուզուել են, անտեսանելի ձուկերի նման: Մտածում է՝ ոչինչ չի հասկանում: Պանիր հացը ծամելու ժամանակ, միտքը ճնճղուկի նման հեռանում է եւ բերանը՝ սեւցած ատամների մէջ՝ քանդուած բոյնի նման բաց է մնում:

Դպրոցների մանր մունր ուսուցիչները մէկը միւսից ժպիտ են փոխ առնում, երկու քայլ յետոյ իրենց դրպանը դնում եւ մտազրաղ՝ շրջունքները կրծոտում: Նստում են ու վեր կենում: Անհանգիստ շարժումներ են անում ու յանկարծ վազում են: Դոներ են բախում: Աչքերի մէջ փոշի ընկած նայուածքով, թարթիչները ձայնի հետ դողդողացնելով, աննշան կուսակցականներին բոցավառ հարցեր են տալիս, իբր թէ այնպէս, հետաքրքրութեան համար: Բնական է, մաքրել պէտք է... Խորհրդային շինարարութեան համար մա՜աքուր մարդիկ պէտք են...ինքը վախ չունի, լոյալ ծառայել է, սակայն եւ այնպէս...

Աննշան կուսակցականը՝ տո՛ այդ սրիկան, որ երէկ...անձրեւ սպառնացող ամպի նման, մտազրաղ եւ խիստ կերպարանք է առնում, աչքերը պտտին տալիս, խորհրդաւոր բառեր արտասանում եւ բարեացակամ՝

— Մի բան կ'անենք...տեսնենք:

Տեսնե՛նք:

Գիշերը անկողինների վերմակները տեղից չեն շարժուում, մարմինները կուչ են եկել զրսպրւած հառաչների հետ: Մեծ խոմփոցները դադարել են. շնչառութիւնները գալարուում են թոքերի վերը, աւելի կոկորդին մօտ: Ու այդ պատճառով, ուղեղների մէջ երազը բոյներ է քանդում, ահաւոր տեսարաններ պարզում, դժոխքներ դետեղում ու ման դալիս անկարելի աշխարհներում:

Ցորեկը՝ հազիւ ջերմոտ շրթունքները սեղմում են գլանակի ափոփանքը՝ կեանքը ներս է մտնում մարմնի ծակոտիքներէն կծու քացախի նման: Արջի մի թաթ չփում է մորթը:

Փչացած ձկթ եւ կամքը:

Մկանունքները ճեղքուում են: Աւրուած մզանակի պէս, դաստակը ցցուում է դէպի անորոշը: Խուլ մի ցաւ պայթեցնում է իր երակը եւ մարդկային էութիւնը գլոր է գալիս հրկիզուած մելամաղձութեան մի աշխարհում:

Վախը՝ ոստայնի մէջ բանտարկուած մրժեղ՝ ոտքերը գալարում է օդի մէջ եւ պատուած թեւը դէմ տալիս վտանգին:

Կինը, մայրը կամ քոյրը՝ վշտի շուրջը պրտրտող ուրուականների նման՝ զգուշօրէն թէյի բաժակը դնում են առջեւը: Մեքենաբար դդալը խառնում է, ոտքը ոտքի վրայ խաղացնում ու առանց խմելու, յանկարծ գլխարկը առնում, դուրս նետուում:

Կինը, մայրը կամ քոյրը շուքի նման երկարում են դրան մօտ ու ձեռքերը գլխներին տանում:

* * *

Երկու օրից ի վեր ամէն ինչ փոխուել է:

Երեւանի բնակիչները բաժանուել են դատաւորների եւ դատուողների:

Դուրս են մնացել վաճառականները: Վերջապէս, չունչ են քաշում: Մաղձից դեղնած դէմքերով, նրանք ծածկում են իրենց զսպուած ատելութիւնը մանր մունր ապրանքների առատ փոշիների տակ եւ ցած ձայնով մեկնաբանում են օրուան դէպքերը: «Թո՛ղ մի քիչ էլ մտաւորականները տեսնեն, թէ սովետական դրախտը ինչ ա, մեծ մեծ խօսում են»...

Կ. Կէնի չէնքի առջեւ, ընկերների կարեւորութիւն առած ազատային երամը շարժումի մէջ է: Ներս, դուրս: Վեր, վար: Թղթեր, ժողովներ, որոշումներ: Հազիւ պատասխանում են բարեւներին:

Տգեղ, կեղտոտ, վիժուկ մանչու ձեւերով ընկերուհիները անդադար ծխում են, կոտրը-